ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

0010, ք.Երևան-10, Մ.Մկրտչյան 5.
Հեռ. @phone_fax
Էլ. փոստ: secretariat@mineconomy.am
Վեբ կայք: www.mineconomy.am

№-Ն/487-2026

«____»_____2026թ

«ԳԱՐԱՆՏ ՄՈԹՈՐՍ» ՍՊԸ-Ի
ՏՆՕՐԵՆ Դ. ՇԱԽԲԱԶՅԱՆԻՆ
(հասցե՝ ՀՀ ք. Երևան, Թբիլիսյան խճ 20
Էլ. փոստ garantmotors@yahoo.com)

Ծ Ա Ն Ո Ւ Ց Ո Ւ Մ
ՀՀ ԷՆ-ԳՀԾՁԲ-25-26/3 ծածկագրով Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին

ՀՀ էկոնոմիկայի նախարարության (այսուհետ՝ Պատվիրատու) և **«Գարանտ մոթորս» ՍՊԸ-ի** միջև 15.01.2026 թվականին կնքված **«ՀՀ ԷՆ-ԳՀԾՁԲ-25-26/3»** ծածկագրով ***ՀՀ էկոնոմիկայի նախարարության կարիքների համար՝ ավտոմեքենաների վերանորոգման ծառայությունների մատուցման պետական գնման*** պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ «Կատարողը» պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ Պայմանագիր) սահմանված կարգով և ժամկետներում Պատվիրատուին մատուցել պայմանագրի N 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված ծառայությունը, իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել ծառայությունը և վճարել դրա համար:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված»:

Ղեկավարվելով վերոհիշյալ իրավական հիմքերով և 20.01.2026թ. **«Գարանտ մոթորս» ՍՊԸ**-ի կողմից պայմանագրով ստանձնած պարտավորություններից հրաժարվելու գրությամբ՝ ՀՀ էկոնոմիկայի նախարարությունը հրաժարվում է **«Գարանտ մոթորս» ՍՊԸ**-ի հետ կնքված պայմանագրից՝ համարելով այն լուծված 800 000 ՀՀ դրամ գումարի չափով, պատշաճ ծանուցումն

ապահովելու նպատակով՝ կկիրառվեն ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» Կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով և Պայմանագրի 7.9-րդ կետով սահմանված դրույթները:

«Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու դեպքում, պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Ընդ որում, սույն կետում նշված որոշումը պատվիրատուի ղեկավարը կայացնում է գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելու կամ կնքված պայմանագրի վերաբերյալ հայտարարությունը հրապարակելու կամ պայմանագիրը միակողմանի լուծելու մասին հայտարարությունը (ծանուցումը) հրապարակելու օրվան հաջորդող տասներորդ օրը: Որոշումը կայացվելուն հաջորդող օրը այն գրավոր տրամադրվում է լիազորված մարմնին և մասնակցին: Լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում որոշումը ստանալուն հաջորդող քառասուներորդ օրվան հաջորդող հինգերորդ օրը, իսկ որոշումը ստանալու հաջորդող քառասուներորդ օրվա դրությամբ մասնակցի կողմից որոշման բողոքարկման վերաբերյալ հարուցված և չավարտված դատական գործի առկայության դեպքում՝ տվյալ դատական գործով եզրափակիչ դատական ակտն ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող հինգերորդ օրը, եթե դատական քննության արդյունքով որոշման կատարման հնարավորությունը չի վերացել:

Ելնելով վերոգրյալից **«Գարանտ մոթորս» ՍՊԸ-ին** տրվում է 5 օրացուցային օր պայմանագրի ապահովման՝ 80,000 ՀՀ դրամը և որակավորման ապահովման՝ 120, 000 ՀՀ դրամը (տուժանքի մասին համաձայնագրերը՝ հավելված 4.2 և հավելված 5.1) ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված N900008000664 գանձապետական հաշվեհամարին սահմանված ժամկետներում վճարելու և բնօրինակները ՀՀ էկոնոմիկայի նախարարության (Միեր Մկրտչյան 5) հասցով ներկայացնելու դեպքում գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելու մասին պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշումը չի ներկայացվի լիազոր մարմնին:

Հարգանքով՝

Recoverable Signature

Ստորագրող
ՀԱՅԿԱԶ ՆԱՍԻԲՅԱՆ
1205870326

2026-02-06 15:38:34 GMT+4
Հաստատված է ԷԿԵՆԱ-ի կողմից

X

ՀԱՅԿԱԶ ՆԱՍԻԲՅԱՆ

Signed by: NASIBYAN HAYKAZ 1205870326

Կատարող՝
Գնումների համակարգման բաժնի պետ, Աննա Ղարիբջանյան
011597194